բողջ գիւղն, զուարթ դիմօք կը գնայ Հիւսէին աղայի մօտ, պարծենալով կը պատմէ։

Ճաֆար աղան ևս ներկայանալով կը թքէ Հիւսէին աղայի երեսն, կասէ։

—«Դու մեր սերունդէն չես, դու չամաչեցի՞ր Խչէի տան կտորածը տեսնելով. չէ նորա հացը կուտես, Ալին յանցանք չունի. իւր ցեղին[1] յատուկ եղածն պիտի կատարէր, իսկ դու Խչէին արիւնը խառնած ես հացին, կուտես. ամօթ, հազար ամօթ,» ասաց և երրորդ ու չորրորդ անգամ թքեց, գետնէն մի բուռ հող առաւ, ցանեց նորա գլխին, ասաց—«քու կնկան լաչակը քու գլխին լինի. ի՞նչ պատասխան պիտի տաս Աստուծոյ առաջ այդ կերած հացիդ համար»։

Շեռեանայ գլխից Խնուս գնալու համար հարաւարևմտեան ուղղութեամբ իրարմէ $^{1}/_{2}$—$^{5}/_{4}$ ժամ հեռաւորութեամբ հետևեալ գիւղերու կը պատահիմք.

—Խասաուրէ Արաս, ուստի 2 ժամ Բռձօի կետուկն, ապա Բռձօ որ կետուկի միւս կողմն՝ Անդափի կը պատկանի, ապա Խունտին, Խուպ.քան, Բրուաքոն, Կալէ, Մուշեան, Կանապի, Քուդկան, Նազէ, Մըլլա—Ալի, Զքռեշ, Գորոխան, Կոբլներ, Սալվորի, յորմէ յետոյ հայ գիւղեր-Ղարա-Զոպան, Գովանտք ևն. մինչև Խնուս։

1, Ցեղական յատկութիւնը քրդաց մէջ մեծ նշանակութիւն ունի։